ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1956 Общественные науки

Գր. Հակոբյան

«ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ» ԱՆՎԱՆ ՄԱՍԻՆ

Մենք հաճախ ենք լսում ռադիոյով ու կարդում «Սովետական Հայաստան» և ուրիշ թերթերի էջերում «Նոր Բայազետ» շրջանի անուն՝ մյուս շրջանների անունների շարքերում։ Բայց ո՞ր-տեղից է կպել այդ անունը Սովետական Հայաստանի գեղեցիկ շրջաններից մեկին և ինչո՞ւ մինչև հիմա մնացել է անփոփոխ, այն էլ Նոր Բայազետ ձևով։ Հենց այդ «Բայազիտ» անվան մասին է, որ ուզում եմ երկու խոսք ասել։

Նոր Բայազետ անունն իրենց հետ բերել են այսպես կոչված հին բայազետցիները, որոնք 1828—1829 թթ. ռուս-տաճկական պատերազմի ժամանակ գաղթեցին իրենց բնաշխարհից, եկան Ռուսահայաստան և բնակություն հաստատեցին Սևանա լճից ոչ հեռու՝ Գյավառ կոչվող գետակի վրա՝ նախկին Երեղարքունյաց գավառում։ Շատ գաղթականներ եկան նաև Ալաշկերտից, որոնք բնակություն հաստատեցին այժմյան Մարտունու շրջանում։

Սակայն որտեղի՞ց է հին Բայազիտի շրջանն ստացել այդ անունը։

Արարատյան նահանգն հնում ուներ քսան գավառ։ Այդ գավառներից մեկն էր Կոգովիտը։ Այս գավառը տարածվում էր Հայկական Պարից հարավ, Մակու գետի վերին և մասամբ միջին հովիտներում։ Բնակիչների մեծ մասը հայեր էին և Ջալալցի ցեղին պատկանող քրդեր։ Այս շրջանն հայտնի էր Արշակավան քաղաքով և Դարույնք ու Արծափ հռչակավոր ամրոցներով։

Յավրուզ (արնախում) սուլթան Սելիմի հայրը՝ Բայազիտ Բ-ն, 15-րդ դարում պարսիկներից գրավեց Արևելյան Հայաստանի շրջաններից մի քանիսը, որոնց թվում նաև հիշված Կոգովիտի գավառը։

Սուլթան Բայազիտ Բ-ն Կոգովիտի գավառը, հատկապես Դարույնք և Արծափ անառիկ ամրոցները շատ դժվարությամբ նվաճեց պարսիկներից, ուստի, իր քաջությունն համբավավոր և անունն անմահացնելու համար Կոգովիտի գավառը վերանվանեց իր անվամբ՝ Բայազիտ։ Ընդհանրապես օսմանյան բռնակալները սիրում էին իրենց զավթած երկրների աշխարհագրական անունները վերանվանել իրենց անվամբ։ Արևելյան Եփրատը մինչև օրս էլ տաճիկները սուլթան Մուրադի անվամբ ասում են «Մուրադ չայ» կամ «Մուրադ սու» Սարիղամիշի և Ղարսի միջև եղած խճուղու վրա գտնվող նախկին ռուսաբնակ մեծ գյուղը մինչև հիմա էլ կոչվում է «Սելիմ բյույ» (գյուղ) յավրուզ Սելիմի անունով, որը Մուհամեդ Ֆաթիհի թոռն էր և հիշված Բայազիտ Բ-ի որդին։

Եթե անհրաժեշտ է, որ Կոգովիտից 1828—1829 թվականներին Գեղարքունիք գաղթած մեր պապերի ընտրած նոր բնակավայրը պահպանի նախկին բնակավայրի հիշատակն ու անունը, ապա ավելի նպատակահարմար է, որ այդ շրջանը կոչվի ոչ թե «Նոր Բայազիտ», այլ «Նոր Կոգովիտ», Նոր Դարույնք կամ Նոր Արծափ, նախկին գավառի հայտնի անուններից մեկով։

Եթե մենք իր ժամանակին մի շարք վայրերի անուններ, որոնք կապված էին մեր երկրի այս կամ այն միապետի անվան հետ, կոչվում էին նրա անունով, փոխեցինք՝ ինչպես օրինակ՝ Ցարիցին, Պետրոգրադ, Ելիզավետոպոլ, Ալեքսանդրոպոլ և այլն, ապա ինչո՞ւ պետք է մինչև հիմա Սովետական Հայաստանի շրջաններից այնպիսինը, որը տվել է Սարուխանյանի, Բաղիկյանի և ուրիշների նման ռևոլյուցիոն պայծառ մարտիկներ, կոչվի մի արնոտ բռնակալի՝ սուլթան Բայազիտի անունով։

Թող զարմանալի և խորթ չթվա, որ «Բայազիտ» բառը ոչ մի կապ չունի Հայաստանի աշխարհագրության ու նրա ժողովրդի պատմության հետ և ոչ էլ աշխարհագրական տերմին է, չնայած մեր գրականության մեջ բավական գործածվել է։

«Նոր Բայազիտ» կոչվող շրջանն ունի իր պատմական և գեղեցիկ անունը՝ Գեղարքունիք։ Թող համապատասխան մարմինները բննեն այս հարցը և այդ շրջանը վերանվանեն կամ Գեղարքունիք և կամ այդ շրջանի տված ռևոլյուցիոն մարտիկներից մեկի անունով։